ՎՐԱՑԻ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԸ ԵՎ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՁՕՐԱՎԱՐՆԵՐԸ

Գրեց՝ Ս. ՄԱՍՈՒՐԵԱՆ*)

ՁՕՐ. ՈՒՕԿԿԵՐ. «Ինչո՞ւ Վրաստանի կառավարութիւնը չի արտօնում անգլիական ըսպաներին այցելելու ռազմագերիներին։»։

ԺՈՐՏԱՆԻԱ. «Այդ տեղի է ունենում Սոչիում պատահած միջադէպի կապակցութեամբ։ Ես ցոյց տուի ձեզ, որ հանրային կարծիքը Դենիկինեան բանակի յառաջխաղացման մէջ տեսնում էր բրիտանական հրամանատարութեան համաձայնութիւնը. եթէ Դենիկինեանների ձերբակալութիւնից անմիջապէս յետոյ անգլիական սպաները նրանց հետ տեսնելու արտօնութիւն ստանային, հասարակութիւնը է՛լ աւելի կ՝ամրապնդուէր իր սկզբունական ենթադրութեան մէջ։ Հէնց որ հարցը կարգադրուի, մենք, ի հարկէ, իսկոյն կը տանք արտօնութիւն»։

ՁՕՐ. ՈՒՕԿԿԵՐ. «Ես չեմ կարող սպասել հանրային կարծիքի փոխուելուն։ Իմ խնդիրքը ընդհանուր-միջազգային է։ Վրաց բանակի մի սպայ կարող է ուղեկցել անգլիական սպաներին ռազմագերիներին այցելելիս»։

ԺՈՐՏԱՆԻԱ. «Մենք պատասխանատու ենք հասարակութեան առջեւ եւ չենք կարող այժմ թոյլ տալ այդ, որովհետեւ այդ կը խախտէր հասարակութեան հաւատը դէպի իր կառավարութիւնը եւ քանի մենք ենք իշխանութեան գլուխը, միայն մենք ենք երկրի կարգի տնօրինողը։ Ես սկզբունքով ոչինչ չունեմ այն միջազգային պահանջի դէմ, որի մասին յիշում էք դուք, բայց այն պահուն, երբ անգլիական հրամանատարութիւնը իր սպաների համար արտօնութիւն էր խնդրում, ոչ մի հնարաւորութիւն չկար տալու իմ արդէն մատնանշած պատճառներով։ Բայց հենց այն ժամանակ անգլիական սպաներին հաղորդուեց, **որ երկու** օր անց նրանք կարող են տեսնուել ռազմագերիների հետ»։

ԳԵԳԵՁԿՈՐԻ. «Ռազմագերիների հետ տեսակցութեան արտօնութիւնը մերժուելուց յետոյ իմ մօտ եկաւ զնդ. Բելլուն եւ ցաւ յայտնեց այդ առթիւ. ես ասացի նրան, որ երկու օրից ես կը կարգադրեմ այդ խնդիրը եւ կը տամ խնդրուած արտօնութիւնը։ Բացի այդ, ես գրել եմ ձեզ, որ Սոչիում Կամաւորական բանակի զօրամասի սպայակոյտը ուզում է զնդակահարել մի քանի հոգի — ըստ ամենայնի բարեխիղճ մարդիկ եւ ժողովրդական գործիչներ՝ մեղադրելով նրանց դէպի Վրաստանի հանրապետութիւնը տածած բարեացակամ զգացումի մէջ։ Ես կը կամենայի լսել զօրավարի կարծիքը իմ չօշափած հարցի մասին»։

ՁՕՐ. ՈՒՕԿԿԵՐ. «Ես արդէն հեռագրել եմ զօր. Դենիկինի սպայակոյտին՝ խնդրելով յարգել իմ միջնորդութիւնը ազատելու համար այդ անձերին եւ ուղարկել եմ իմ սպային վիրաւորներին եւ գերիներին տեսնելու նպատակով։ Յունուար 24-ին ես ուղարկել եմ վարչապետին մի նամակ՝ առաջարկելով մեր վերահսկողութեան տակ զնել նախկին Անդրկովկասեան երկաթուղու ամբողջ գիծը։ Երկու շաբաթ անցած ես առաջարկութիւն ստացայ կազմելու մի յանձնախումբ անհրաժեշտ պայմանները մշակելու համար»։

«Զօր. Բրոուսը հաղորդում է ինձ, որ ամբողջ երկաթուղագիծը գտնւում է ամենաողբալի վիճակի մէջ։ Եթէ այդ խնդիրը վերաբերուէր միայն Վրաստանին, ես կը բաւականայի միայն քայքայման փաստը մատնանշելով, բայց չօշափած հարցը չափից աւելի բարդ է եւ վերաբերւում է ամբողջ Անդրկովկասին։ Այդ գործը ամենաշուտ կերպով կազմակերպելու համար ես առաջարկում եմ հետեւեալը. զօր. Բրոուսը կը ներկայացնէ իր զեկուցումը համապետական երկաթուղային թրբոտի մասին։ Այդ զեկուցման մէջ ապահովուած կը լինեն Անդրկովկասի բոլոր հանրապետութիւնների եւ, ի մասնաւորի, Վրաստանի շահերը։ Եթէ այդ առաջարկն ընդունուի, երկաթուղային գործը դրուած կը լինի անհրաժեշտ վիճա-

*) Տե՛ս այս յօդուածին սկիզբը ամսագրի նախորդ թիւին մէջ։